տեղւոյն. և զհրացանսն զառիվեր լերանն հանցեն, յորմէ մարտիցեն ընդ զոչովայու. և յայլմէ լուաք թէ սոքա, այսինքն քրիստոնեայք, զմին ի տաճակ կալեալ, և զայս դիտումս նոցին իմացեալ, վասն որոյ ինքեանք զյետուստ տաճկին առեալ, մարտ եդեալ են. ի քրիստոնէից 240 անկեալ, իսկ ի տաճկաց 1000. և փախեալ ասեն, և լուաք թէ զօրք սոցա Ռ են, ևս Ռ զատանայ են։ Աստ տակաւին ի նոյն կացութեան է ի կողմանէ զօրաց ասեն զոյ. հրէից մեսիայն դարձաւ։ Միայն 500 զինու[ո]ր ժամանեաց ի զէմին, որ է սէմէլին, աստի հեռու մի ժամ. նաև չորս նաւն ԹՌՃԷ մանր հրացանք իբրու 40. ես աչօք համարեցի, այսոքիկ թուի թէ ի ցամաքի շրջեցուցանելի են։ Ասեն թէ ամենեքեան զօրքն մինչև ի վերջն ամսոյս գալոց և հաւաքելոց են։ Բայց ի վերայ այսր ամենայնի տակաւին չունիմք զապահովութիւն. տաճիկն այս անգամ կարի զլրբութիւն ստացաւ, յաղագս անցելոյ ամի անկարգութեան սոցին, որ գործեցաւ։ Նաև ափշեցուցանէ զիս թուլութիւն սոցին, ոչ գիտեմ արդեօք զդարան ինչ ունին գործելոյ։ Եւ կամ թէ մի գուցէ (զոր Տէր մի արասցէ) թէ ձերմակ լաթն խափեալ իցէ զսա, և դարան ինչ ունի գործել տալոյ. խաղաղութեան նշան ոչ երևի, զի թշնամիք սոցա ոչ դադարին ի յաշնանէ մինչև ցայժմ ի վնասելոյ։...

Պատրաստական ծառայ
Հայր Միքայէլ Վ. Սեբաստացի

1738 Մայիս 10
12 գիր սոյն թուիս,
ի Պէլրդատու

ՀԹ.

Ցաջորդիւ կ՝ամբողջացնէ Հ. Միքայէլ իր նախորդ նամակը։

Գերյարգելոյ Աբբայ Հօրդ մերում, տեառն տեառն Մխիթարայ Աստուածաբանութեան վարդապետի

.... յանցելում զրոջ ծանուցի թէ տաճիկք եկեալ են ի վերայ գոչովայու. զօրք սոցին որ անդ դէմ ելեալ պատերազմեալ են, հազար և երկու հարիւր ի տաճկաց ձգել, յինքեանց չորս հարիւր և մի ճէնրալ, տաճիկքն փախեալ. բայց մինչ ըմբոնեալք են տաճիկքն զլեզու, իմացեալ թէ սակաւ զօրք գոն ի գոչովայ, բազմացեալ վերստին, դարձեալ այժմ պաշարեալ են զգոչովայ այն հինգ հարիւր զինու[ո]րքն, որք նոր եկեալ ասացաք յանցելում, ուղարկեալ ասեն զնոսա անդ ի յօգնութիւն. եթէ զգոչովայ առնուն, ճանապարհն է դմշվար, գոչովայ բանալիքն է նորին. ի մաճարստան ի յապականութիւն դնեն, զի ի նոսա ևս ապստամբութիւն բազում գոյ։ Այսոքիկ տակաւին տաճկին ցնցուխքն են, եթէ մեծ զօրք գայ զինչ լինիցի ոչ գիտեմ, զի ասեն թէ, որպէս և նոյն քահանայն որ ի ստամպոլու եկն ընդ գօռէրի ֆռանցէզու, ասաց. վէզիրն մսրայ զուլոմն և ուռումէլու բոլոր էսկէրոմն ի վերայ սոցա, և թագաւորն անատոլու բոլոր զօրօքն ի վերայ մոսկովին գնալոց են....։

Պատրաստական ծառայ ամենայնի
Հայր Միքայէլ Վ. Սեբաստացի

1738 Մայիսի 17ին
13 երրորդ գիր թուիս
ի Պէլրդատու։

Զ.

Կատարեալ ու խղճամիտ օրագրող մ՝է Հ. Միքայէլ. այնքան աւելի մանրամասն, բազմազան ու խիտ են անոր հետաքրքրական ու պատմական տեղեկութիւնները՝